



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N\_102

Տուգանք նշանակելու մասին

21.04.2021թ.

ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի կողմից 2021թ. ապրիլի 06-ի N\_166-Ա հրամանով «ՎԱՍԱՐՄ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ում կատարված  
Տնտեսվարող սուբյեկտի անվանումը

ստուգման նյութերը (ստուգման ակտ N\_166-Ա կազմված 19.04.2021թ., խախտումների մասին 08.04.2021թ. արձանագրությունը և այլ նյութերը), որոնցով բացահայտվել է որ՝ ՍՊԸ-ն զբաղվում է սեղմված բնական գազի մանրաձախ վաճառքով: Ստուգմամբ պարզվեց, որ վաճառվող բնական գազի կոմպրեսացված վառելիքի լիցքավորման բաշխիչ աշտարակների էլեկտրոնային հանգույցը սահմանափակում է լիցքավորման գազի ճնշումը մինչև 21.0 ՄՊա, մինչդեռ համաձայն տեխնիկական կանոնակարգի պետք է սահմանափակվի մինչև 19.6 ՄՊա:

Փաստացի խախտվել են «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի և ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 28-ի N 1101-Ն որոշմամբ հաստատված «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼԾԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգ» 87-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը:

Կատարված իրավախախտման հանգամանքները և խախտման էությունը

Նշված իրավախախտման համար պատասխանատու է՝

Տնօրեն՝ Գրիգոր Մարտիրոսյան

իրավախախտողի անունը, ազգանունը, պաշտոնը

ք. Էջմիածին, Կամո փ., 56 շ., 57 բն.

մշտական բնակավայրը և հասցեն

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 244 պրիմ 7 հոդվածով.

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Գրիգոր Մարտիրոսյանին և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158 հոդվածի 3-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



ԱՐՄԵՆ ԿՈՏՈՒՅԱՆ